## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշենի համայնք, ՀՀ Արմավիրի մարզ,
գ.Առատաշեն, Հեռ. (0231)62328 ,
aratashen.armavir@mta.gov.am

N 154
*14 դեկտեմբեր 2016թ.*

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 07-ի թիվ 09 նիստի որոշումները:

Առդիր 21 էջ:

**Համայնքի ղեկավար՝** **Վահրամ Հարությունյան**

*Կատ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 29

## ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 07-ի թիվ 09 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
2. ԱՎԱԳՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ
7. ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
9. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
ավագանու 2016թվականի դեկտեմբերի 07-ի
Թիվ 09 նիստի N29 որոշման

# ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 09 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1. Առատաշեն համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Առատաշեն համայնքի վարչական տարածքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
3. Առատաշեն համայնքի կողմից 2017թ. ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
4. Առատաշեն համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին
5. Առատաշենի համայնքապետարանի, <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության, <<Առատաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների 2017թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
6. Առատաշեն համայնքի 2017թ. բյուջեն հաստատելու մասին

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 30-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի վարչական տարածքում 2017թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
2. ԱՎԱԳՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ
7. ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
9. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
2016թվականի դեկտեմբերի 07-ի թիվ 09 նիստի
30-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ

2) Սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 (քսանհինգ հազար) դրամ.

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 (հիսուն հազար) դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 (մեկ հազար) դրամ

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 (տասնհինգ հազար) դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝1000 (մեկ հազար) դրամ

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1000 (մեկ հազար) դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4.500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ.
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 (երեք հազար) դրամ:

5. Համայնքի տարածքում՝
1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 (երեք հարյուր հիսուն) դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային

գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30.000 (երեսուն հազար) դրամ

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 5000 (հինգ հազար) դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 (մեկ հազար) դրամ.

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 (հիսուն հազար) դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար)դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000( հարյուր հազար) դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000( մեկ հազար) դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500( երկու հազար հինգ հարյուր) դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500( հինգ հարյուր) դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 (յոթ հարյուր) դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 (հինգ հարյուր) դրամ: Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 (հիսուն հազար) դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10.000 (տաս հազար) դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 (մեկ հազար) դրամ.

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 (մեկ հազար) դրամ.

13. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 1000 (մեկ հազար) դրամ.

14. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝ 500 (հինգ հարյուր) դրամ.

15. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքի կողմից տրամադրվող թույլտվության վճար՝ 2000 (երկու հազար) դրամ;

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ու Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 31-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2017ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի կողմից 2017թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
2. ԱՎԱԳՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ
7. ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
9. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի
2016թվականի դեկտեմբերի 07-ի թիվ 09 նիստի
N 31-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2017ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող, ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝
    1) Համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար՝ 3000 /երեք հազար/ դրամ:
2. Համայնքային ենթակայության մանկապարտեզում երեխաների պահպանման և հաճախման համար ծնողական վճար սահմանել 4000 /չորս հազար/ դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 32

## ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ղեկավարի ամսեկան վարձատրության չափը սահմանել 270 000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 01-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
2. ԱՎԱԳՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ
7. ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
9. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 32

### ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ղեկավարի ամսեկան վարձատրության չափը սահմանել 270 000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 01-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
2. ԱՎԱԳՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ
7. ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
9. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 33

### ԱՌԱՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ, <<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ>> ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ, <<ԱՌԱՏԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշենի համայնքապետարանի, <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության և <<Առատաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված N1, N2, N3:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
2. ԱՎԱԳՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ
7. ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
9. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ N1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն
համայնքի ավագանու
2016թվականի դեկտեմբերի 07-ի
Թիվ 09 նիստի N33որոշման

2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը 12.
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքի միավորի դրույքը | Մեկ միավորի պաշտոնային դրույքաչափը | Հավելյալ աշխատավարձ | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Գյուղական համայնքի ղեկավար | 1 | 270000 | | |
| 2. | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 210000 | | |

Համայնքային ծառայողներ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Աշխատակազմի քարտուղար | 1 | 200000 | | |
| 4. | Գլխավոր մասնագետ | 1 | 186000 | 9300 | |
| 5. | Առաջատար մասնագետ | 1 | 140000 | 7000 | |
| 6. | I կարգի մասնագետ | 1 | 138000 | 6900 | |
| 7. | II կարգի մասնագետ | 2 | 105000 | | |

Տեխնիկական սպասարկողներ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8. | էլեկտրիկ | 0,5 | 36376 | | |
| 9. | վարորդ | 1 | 105000 | | |
| 10. | Օժանդակ բանվոր | 1 | 72752 | | |
| 11. | Այգեպան | 1 | 72752 | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 11.5 | 1640880 | 23200 | |

ՀԱՎԵԼՎԱԾ N2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն
համայնքի ավագանու
2016թվականի դեկտեմբերի 07-ի
Թիվ 09 նիստի N33որոշման

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
ԱՌԱՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
«ԱՌԱՏԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը 17.
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| NN | Հաստիքի անվանումը | Հաստիքի միավորի թիվը | Մեկ հաստիքի դրույքաչափը (ՀՀ դրամ) | Մեկ աշխա-տողի դրույքը | Մեկ աշխատողի ամսական աշ-խատավարձը (ՀՀ դրամ) | Լրավճար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 104000 | 1 | 104000 | |
| 2. | դաստիարակ | 2.24 | 102000 | 0.61 | 62220 | |
| | | | | 0.61 | 62220 | |
| | | | | 0.51 | 52020 | |
| | | | | 0.51 | 52020 | |
| 3. | Երաժշ. դաստիարակ | 0.5 | 102000 | 1 | 51000 | |
| 4. | Բուժ.քույր | 0.5 | 72752 | 1 | 72752 | |
| 5 | Խոհարարի օգնական | 0.5 | 72752 | | | |
| 6. | Լվացքարար | 1 | 72752 | 1 | 72752 | |
| 7. | Դաստիարակի օգնական | 2 | 72752 | 1 | 72752 | 5152 |
| | | | 72752 | 1 | 72752 | |
| 8. | Հաշվապահ | 0.5 | 72752 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| . | գործավար | 05 | 72752 | 1 | 72752 | 5152 |
| 10. | խոհարար | 1 | 72752 | 1 | 72752 | 5152 |
| 11. | Տնտեսվար | 0.5 | 72752 | 1 | 72752 | 5152 |
| 12. | Հաշվետար-գանձապահ | 0.5 | 72752 | | | |
| 13. | պահակ | 2 | 72752 | 1 | 72752 | |
| | | | 72752 | 1 | 72752 | |
| 14. | Օժանդակ բանվոր | 0.5 | 72752 | 1 | 72752 | |
| 15. | Պահակ | 0.5 | 72752 | | | |
| 16. | Դռնապահ | 1 | 72752 | 1 | 72752 | 5152 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 14.74 | | 17 | 1183752 | 25760 |

ՀԱՎԵԼՎԱԾ N3
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն
համայնքի ավագանու
2016թվականի դեկտեմբերի 07
Թիվ 09 նիստի N33որոշման

## 2017ԹՎԱԿԱՆԻ
## ԱՌԱՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը 6.
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

| NN | Հաստիքի անվանումը | Հաստիքի միավորների թիվը | Մեկ հաստիքիդ դրույքա-չափը (ՀՀ դրամ) | Լրավճար | Աշխա-տողների թիվը | Դրույքաչափը ՀՀդրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 80000 | - | 1 | 80000 |
| 2. | հավաքարար | 1 | 72752 | - | 1 | 72752 |
| 3. | պահակ | 1 | 72752 | - | 1 | 72752 |
| 4. | պահակ | 1 | 72752 | 5152 | 1 | 77904 |
| 5. | հաշվապահ | 1 | 72752 | 5152 | 1 | 77904 |
| 6. | Սպորտային հրահանգիչ | 0.75 | 72752 | 3864 | 1 | 58428 |
| | ընդամենը | 5.75 | - | | 6 | 439740 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 34-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2017 թվականի բյուջեն՝
   ա) եկամուտների գծով՝ 65665.0 հազ. դրամ
   բ) ծախսային գծով՝ 65665.0 հազ.դրամ
   գ) դեֆիցիտը՝ 0 հազ. դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի.
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի.
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի.

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը ( պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի.

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի.

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի.

8. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև.

բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 50%-ը:

9. Թույլատրել Առատաշեն համայնքի 2017թվականի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից համայնքի բյուջեի հատվածում չկանխատեսված ծախսերի և նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորումը իրականացնելուն:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
2. ԱՎԱԳՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ
7. ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
9. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 35-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով, 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, <<Բյուջետային համակարգի>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» ԹԻՎ 38-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ ՝համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
2. ԱՎԱԳՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ

7. ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

9. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն
համայնքի ավագանու
2016թվականի դեկտեմբերի 07-ի
N35-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

## 1.ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՎ

1) 01.11.2016 թվականի դրությամբ համայնքից բացակայում են գյուղ. նշանակության հողերի 211 համասեփականատերեր, որոնց հողերի մեծ մասը չի մշակվում և հողերի հարկերի գումարը կազմում է 2328.0 հազ. դրամ:
Հաշվի առնելով վերը նշվածը, Առատաշեն համայնքի 2016 թվականի բյուջեի եկամուտները՝ «Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում հողի հարկ» հոդվածը պակասեցնել 2328.0 հազ. դրամով՝
11600.0 հազ.դրամը դարձնել 9272.0 հազ. դրամ:

## 2.ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

### 2.1.Գյուղապետարան (1.1.1)

1) 4112 հոդվածը պակասեցնել 200,0 հազ.դրամ
2) 4239 հոդվածը պակասեցնել 200,0 հազ.դրամ
3) 4251 հոդվածը պակասեցնել 1000.0 հազ. դրամ
4) 4264 հոդվածը պակասեցնել 200.0 հազ.դրամ
5) 4214 հոդվածը պակասեցնել 50.0 հազ.դրամ
6) 4241 հոդվածը պակասեցնել 100.0 հազ.դրամ
7) 4212 հոդվածին ավելացնել 122.0 հազ.դրամ
8) 4261 հոդվածին ավելացնել 100.0 հազ. դրամ

### 2.2. Ընդհանուր բնույթի ծառայություններ (1.3.3)

1) 4239 հոդվածից պակասեցնել 500.0 հազ.դրամ
2) 4269 հոդվածից պակասեցնել 500.0 հազ.դրամ
3) 4252 հոդվածին ավելացնել 200.0 հազ.դրամ